ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. ԺԷ. դարու վերջը կանգնուած է Զենոբիոյ պալատը՝ հաւանօրէն Անտոն Կասբարիի ճարտարապետութեամբ։ Կը համարուի որ նախապէս կար շէնքին միջին մասը, որ կը պատկանէր Էլէնա Գօռնէր Մորոզինիի, որմէ գնելով յետոյ Զենոբիոյ ազնուական ընտանիքը՝ երկուստեք ընդարձակել և ճոխացնել կու տայ յաւելումներով ի ներքուստ և արտաքուստ՝ Աքալֆարոդդոյ և Գեմանցա ճարտարապետներուն ծրագիրներուն համաձայն։ Այս պատրիկեան ընտանիքը միշտ բարեկամ և մեկենաս ըլլալով գեղարուեստի և ուսմանց՝ հովանաւորած է պալատիս մէջ ուտինեցի Լուքա Գարլեվարիսը՝ մինչեւ անոր մահը (1731)։ Սա եղած է դաշտանկարի, ծովանկարի և հեռանկարի վարպետ մը Վենետկեան դպրոցէն, որ և իր արուեստի բաժինը թողած է հոն որմանկարներով, ինչպէս և Լածծարինի զարդարած է ձեղուն մը։ Դահլիճը կամ «Պարասրահը» կը պարծի նոյն ինքն Ճիովաննի Պադդիսդա Թիէփոլոյի առաջին տարիներու մոզական արուեստի մասնակցութեամբը. (տես Giulio Lorenzetti: Venezia e il suo Estuario, էջ 527, և G. Fontana: Cento palazzi fra i più celebri di Venezia. 1865. էջ 366)։

Զենոբիոյ այս շքեղ պալատը, որ երբեմն հիւրընկալած է Սպանիոյ թագաւորն ու թագուհին իրենց ի Վենետիկ այցելութեան օրերուն, 1844-ին պատկանած է Վիչենցացի կոմս Պադդիսդա Սալվիի. իսկ 1850-ին «գնեալ լինի պալատս ի ստացուած (Ռափայէլեան) Վարժարանիս 110,000 աւստ. լիր. յաւելեալ գչափ միոյ ամին 5000 Աւստ. և այլովք ծախիւք և գնով առ երի աղքատին տնակօք եհաս գինն ց120,000 Աւստր.» («Օրագր. Մ. Ռ. Վարժ.ի»)։ Այսպէս ուրեմն անիկա մեր սեփականութիւնը դառնալէ վերջ՝ Փեզարոյի պալատէն հոն կը փոխադրուի մեր Ռափայէլեան Վարժարանը, ուր ազգիս զաւակները սերունդէ սերունդ կը փութան դարձեալ, յանձնուելու Մխիթարայ որդւոց ազգանուէր սիրոյն ու խնամքին. և այս անգամ ուսմունքէն զատ նաեւ ֆիզիքական մէջ կը մարզուին շնորհիւ օդասուն պարտէզին՝ որով օժտուած էր պալատը։

Վարժարանին պաշտօնական բացումը տեղի կ'ունենայ մեծ հանդէսով 1850 Հոկտեմբեր 21-ին։

2. Ճարեանի տեսչութեան շրջանին պատուաբեր է հետեւեալ տեղեկութիւնը՝ զոր կու տայ 1859 թուականին Փարիզու Մուրատեան Վարժարանի տեսուչը, որ այն ատեն Հ. Ղ. Ալիշանն էր։ Ցետ հաղորդելու որ այդ տարի Մուր. Վարժարանի Պարգեւաբաշխութեան հանդէսին նախագահ բազմեր է «Պարոն Դայլըր կաճառորդ Կացրդարանին (Institut) պաշտպան և նախագահ ընկերութեանց արուեստից և բարերարութեանց, այր ծանօթ և սիրելի բազմաց և բարեպաշտ»՝ կը յաւելու ապա. «և է ծերունին այն որ երկու կամ երեք ամօք յառաջ եկեալ ի Ռափ. Վարժարան՝ առաջի Վ. Հ. Աբրահամու և իմ խօսեցաւ ջերմաջերմ գոհութիւն զՄիաբանութենէս»։ Հ. Ալիշան ամփոփելով յետոյ սուղ տողերու մէջ հանդէսին նկարագրականը, կ'ըսէ. «Ցետ որոյ նախագահին կանգուն կալով ընթերցաւ ճառիկ մի գովեստի զՄիաբանութենէս, յոյժ մեծագով, առանձինն յիշելով զճարտարութիւն նկարուց և ուրուագծաց սանից Ռափայէլեան Վարժարանին, զորս վեր րադասեաց քան զամենայն վարժարանաց Գաղղիոյ, բաց ի միոյն ի մեծէ վարժարանէ Գեղարուեստից (Beaux arts)». (Նմկ. Հ. Ալիշանի առ Հիւրմ. Աբր. Փարիզ, 1859 Օգոստոս 12)։

3. Տարւոյս շրջանին հրաւէր մը կը հասնի Աղեքսանդր Ռափայէլէն առ Միաբանութիւնս. կը խնդրէ որ Հիւրմիւզեան Աբբահայր և իրեն հետ նաեւ հարազատը Գէորգ. Եդուարդ՝ եթէ կարենայ՝ Լոնտրա երթան «ի հանդէս օծման եկեղեցւոյ իւրոյ դաստակերտի» («Ազգաբանութիւն Ռափ. և Մուր. Տանց»)։ Որքան որ սոյն խնդիրքը սիրով կ'ընդունուի Վարչական ժողովէն (Ժող. Արձ. 1850, Նիստ փետրուար 15-ի), բայց յետոյ անկարելի եղած է գործադրել։ Հոս սակայն կ'արժէ գիտնալ, որ Միաբանութեանս այս բարերարը ժամանակին կանգնած է նաեւ ի Պաշպալով «դպրոց փոքրիկ ի կրթութիւն աղջկանց աղքատաց Հայոց». (Անդ)։ Իսկ իր մահուան առթիւ